

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 օգոստոսի 2001 թվականի N 720
քաղ. երևան

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏՎՈՂ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին կետի «ժդ» ենթակետին և «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել մաքսատուրքի վճարումից ազատվող՝ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական հիմնադրամի համալրմանն ուղղված ապրանքների ցանկը (կցվում է):

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
օգոստոսի 7-ի N 720 որոշմամբ

Ց Ա Ն Կ

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏՎՈՂ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Ծածկագիրը՝	Ապրանքախմբի անվանումը
1	2
3925	Շինարարական դետալներ պլաստմասսայից այլ տեղում չնշված
բացառությամբ	
3925 30 000	Փակոցափեղկեր, գալարավարագույրներ (ներառյալ վենետիկյան շերտավարագույրները), համանման իրեր և դրանց մասերը
6802	Քար՝ մշակած (բացի թերթաքարից) հուշարձանների կամ շինարարության համար, և ապրանքներ քարից, բացի 6801 ապրանքային դիրքի ապրանքներից. խորանարդիկներ՝ խճանկարի համար, և համանման ապրանքներ՝ բնական քարից (ներառյալ թերթաքարը) հիմքով կամ առանց հիմքի. գրանուլներ, մանրուքներ և փոշի՝ բնական քարից (ներառյալ թերթաքարը)՝ արհեստականորեն ներկված
6901 00 000	Աղյուսներ, բլոկներ, սալիկներ (կղմինդր) և կերամիկական այլ ապրանքներ՝ սիլիկատաղային քարային փոշուց (օրինակ՝ կիզելգուրից, տրիպոլիտից կամ

	դիատոմիտից) կամ սիլիկահողային համանման հանքաքարերից
6902	Հրակայուն աղյուսներ, բլոկներ, սալիկներ (կղմինդր) և համանման հրակայուն կերամիկական շինարարական նյութեր, բացի սիլիկահողային քարային փոշուց կամ սիլիկահողային համանման հանքաքարերից պատրաստված ապրանքներից
6904	Աղյուս՝ շինարարական, բլոկներ՝ հատակի համար, կերամիկական քարեր կրող կամ հենասյունային կառուցվածքներին ամրացնելու համար և համանման ապրանքներ կերամիկայից
6906 00 000	Կերամիկական խողովակներ, մեկուսիչ խողովակներ, ջրահեռացման խողովակներ և խողովակների կցամասեր
7004	Ապակի՝ ձգովի կամ փշովի, թերթերով, կլանող, անդրադարձնող կամ չանդրադարձնող շերտով կամ առանց դրա, բայց չմշակված որևէ այլ եղանակով
7005	Ապակի ջերմահղկված և ապակի հղկված կամ ողորկված մակերեսով, թերթերով, կլանող, անդրադարձնող կամ չանդրադարձնող շերտով կամ առանց դրա, բայց չմշակված որևէ այլ եղանակով
7016	Բլոկներ սալարկման համար, շինարարության մեջ օգտագործվող սալեր, աղյուս, սալիկներ և այլ ապրանքներ՝ մամլած կամ ձուլածո ապակուց, ամրանավորված կամ չամրանավորված, ապակյա խորանարդիկներ և այլ ոչ մեծ ապակյա ձևեր՝ հիմքով կամ առանց հիմքի, խճանկարի կամ համանման հարդարային աշխատանքների համար, ապակիներ ապակենկարների համար և համանման ապակիներ, բազմաբջջավոր կամ փրփրապակի՝ բլոկների, սալերի, սալիկների կամ այլ ձևերով
8303 00	Չիրկիզվող պահարաններ, սեյֆեր՝ զրահապատված կամ ամրանավորված, ներառյալ բանկային գանձարանների սեյֆերը և դռները, արկղեր՝ հատուկ նախատեսված փողեր և փաստաթղթեր պահելու համար, և համանման ապրանքներ ոչ թանկարժեք մետաղներից
8415	Կայանքներ՝ նախատեսված օդի որակավորման համար, սարքավորված շարժիչային օդափոխիչով և սարքերով՝ օդի ջերմաստիճանը և խոնավությունը փոխելու համար, ներառյալ օդաորակավորիչները (կոնդիցիոներները), որոնցում խոնավությունն առանձին չի կարգավորվում
841840	Սառցարանային պահարաններ ուղղահայաց տեսակի՝ 900 Էից ոչ ավելի տարողությամբ
841850	Կահույք (կամերաներ, պահարաններ, ցուցափեղկեր, վաճառասեղաններ և համանման կահույք)՝ ցուցադրման և պահպանման համար՝ ներկառուցված սառնարանային կամ սառցարանային սարքավորումներով
8418 61 00	Ջերմային պոմպեր՝ բացի 8415 ապրանքային խմբի օդի կարգավորման կայաններից
8418 69 000	Այլ սառնարանային և սառցարանային սարքավորումներ, ջերմային պոմպեր
8418 91 000	Կահույք սառնարանային-սառցարանային սարքավորումների ներկառուցման համար
8472 10 000	Պատճենահան-բազմացնող մեքենաներ
8514	Արդյունաբերական և լաբորատոր էլեկտրական վառարաններ և խուցեր (ներառյալ

ինդուլցիոն կամ դիէլեկտրիկ տաքացման վառարանները). այլ ինդուլցիոն կամ դիէլեկտրիկ տաքացման արդյունաբերական կամ լաբորատոր սարքավորումներ ջերմամշակման համար

8517 Հեռախոսային ապարատներ, ներառյալ հեռախոսային ապարատներ՝ բջջային կապի ցանցի կամ ոչ լարային կապի այլ ցանցերի համար, այլ սարքավորումներ՝ ձայնի, պատկերի և այլ տվյալների հաղորդման կամ ընդունման համար, ներառյալ հաղորդակցուղու սարքավորումները՝ լարային և ոչ լարային կապի համար՝ բացառությամբ 8443, 8525, 8527 կամ 8528 ապրանքային դիրքի ընդունող կամ հաղորդող սարքավորումների

բացառությամբ

851710 Հեռախոսային ապարատներ, տեսախոսներ

8518 Խոսափողներ և տակդիրներ՝ դրանց համար, բարձրախոսներ կորպուսների մեջ մոնտաժված կամ չմոնտաժված, գլխամասային հեռախոսներ և ականջակալներ՝ խոսափողին զուգակցված կամ չզուգակցված, և լրակազմեր կազմված միկրոֆոնից և մեկ կամ ավելի բարձրախոսներից, ձայնի հաճախականության էլեկտրական ուժեղարարներ, էլեկտրական ձայնաուժեղարար լրակազմեր

8525 Հաղորդող ապարատներ՝ ռադիո- կամ հեռուստահաղորդումների համար, իր մեջ ընդգրկող կամ չընդգրկող՝ ընդունող, ձայնագրող կամ ձայն վերարտադրող ապարատներ, հեռուստատեսային խցիկներ, թվային խցիկներ և ձայնագրող տեսախցիկներ

բացառությամբ

852580 Հեռուստատեսային խցիկներ, թվային խցիկներ և ձայնագրող տեսախցիկներ

8527 Ընդունող ապարատուրա՝ ռադիոհեռարձակման համար, նույն կորպուսում համատեղված կամ չհամատեղված ձայնագրող կամ ձայն վերարտադրող ապարատուրայով կամ ժամացույցներով

8528 Մոնիթորներ և պրոյեկտորներ, իր մեջ չընդգրկող ընդունիչ հեռուստատեսային ապարատուրա, ընդունիչ ապարատուրա՝ հեռուստատեսային կապի համար՝ իր մեջ ընդգրկող կամ չընդգրկող լայնահեռարձակող ռադիոընդունիչ կամ ձայնի կամ պատկերի գրանցման կամ վերարտադրության ապարատուրա

8543 Էլեկտրական մեքենաներ և ապարատներ, անհատական ֆունկցիաներ ունեցող, այլ տեղում չնշված

8703 **(Տողը հանվել է 03.03.11 N 179-Ն)**

8711 **(Տողը հանվել է 03.03.11 N 179-Ն)**

8716 Կցանքներ և կիսակցանքներ, այլ ոչ ինքնագնաց տրանսպորտային միջոցներ, դրանց մասերը

9105 Ժամացույցներ՝ չնախատեսված իր վրա կամ իր հետ կրելու համար, այլ

9506 Մարզագույք և սարքավորումներ՝ ֆիզկուլտուրայով, մարմնամարզությամբ, թեթև աթլետիկայով, սպորտի այլ ձևերով (ներառյալ սեղանի թենիսը) զբաղվելու կամ

բացօթյա խաղերի համար՝ տվյալ խմբի այլ տեղերում չնշված կամ չներառված,
լողավազաններ և ավազաններ՝ երեխաների համար

9508

Կարուսելներ, ճոճանակներ, հրաձգարաններ և այլ ատրակցիոններ, շրջիկ
կրկեսներ, շրջիկ գազանանոցներ և շրջիկ թատրոններ

97

(Տողը հանվել է 09.08.07 N 977-Ն)

1. Սույն ցանկում օգտագործվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերի համակարգը:

(Ցանկը փոփ., լրաց., խմբ. 09.08.07 N 977-Ն, խմբ., փոփ. 03.03.11 N 179-Ն)